ԴՊՐՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԽՄԲԱԳԻՐ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ.

1875 ամի № 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Մաս. Երես.

1. Ազգային հոգևոր ուսումնարան Ղզլարում. . 235—267
2. Վիճակագրական տեղեկութիւններ ծխական ուսումնարանների մասին . . 268—285
3. Ազգային ուսումնարաններ Տաճկաստանում . 286—298
4. Լուսաւորութեան նախարարի հրահանգ ծխական ուսումնարանների համար (Կը շարունակուի). 299—302

Բ. Մաս.

1. Հանդէսի ժողովը (Կը շարունակուի) . 303—310
2. Ընդհանուր տեղեկութիւններ բնութեան երեւոյթների վ. 311—321
3. Սուրբ ... (փոխադր.) (Շարունակելի). . 322—328

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ ՎԱՆԻՑ.

ՌՅԻԴ — 1875

ԴՊՐՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 8.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1875 *ամի*

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ ՎԱՆԻՑ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 22 Марта 1875 г.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ազգային հոգեւոր ուսումնարան Պղարում։
2. Վիճակագրական տեղեկութիւններ արքունի ուսումնարանների մասին
3. Ազգային ուսումնարաններ Տաճկաստանում։
4. Լուսաւորութեան նախարարի հրամանը արքունի ուսումնարանների համար։

Ազգային Հոգևոր Ուսումնարան Ղզլարում:

Ռուսաստանի հայաբնակ քաղաքների շարքում նշանաւոր տեղ բռնում, Ղզլարը թէ իր բազմամարդութեամբ, թէ իր ընդարձակ վաճառականութեամբ և թէ մանաւանդ իր կրօնական ջերմեռանդութեամբ և ազգասիրական գործքերով: Ղզլարի հայազն հասարակութիւնը իր մտաւոր զարգացման կողմից բաժանվում, երկու գլխաւոր մասն — աւելի զարգացած և սակաւ զարգացած: Բաղդատելով ուրիշ հայաբնակ քաղաքների հետ, զոր օրինակ Աստրախանի և Նոր Նախիջևանի հետ, այստեղ, Ղզլարում աւելի շատ է տարածուած մտաւոր զարգացում: Աւելի սակաւ յարաբերութիւններ ունենալով մայրաքաղաքների հետ քան թէ Աստրախանը և Նոր Նախիջևանը, Ղզլարը ընդհակառակն միշտ աւելի շատ ուսանողներ ունեցել է թէ Մոսկուայի Լազարեան Ճեմարանում և այլ ուսումնարաններում և թէ Մոսկուայի և Պետերբուրգի համալսարաններում, նաև Ստաւրապօլու գիմնազիայում և մինչև անգամ Թիֆլիզի Ներսիսեան ուսումնարանում: Բացի սորանից՝ թէպէտ Նոր Նախիջևանի և Ղզլարի քաղաքական դրութիւնները նման են միմեանց բնակիչների քանակութեան կողմից և իրեանց մէջ շատ սակաւ օտարազգիք ունենալու կողմից, մինչև անգամ վարչութեան կողմից մասնաւոր առաւելութիւն կայ յօգուտ Նոր Նախիջևանի, բայց հայկական ուղղութիւնը աւելի զարգացած է Ղզլարում քան թէ Նոր Նախիջևանում, իսկ Աստրախանում առաւել ևս նուազ է: Մինչդեռ Ղզլարի ուսումնաւարտ երիտասարդները սակաւաթիւ բացառութեամբ սիրում են պարապել ազգային գործերով և կամ համակրել այդ գործերին, ընդհակառակն՝ Նոր Նախիջևանի ուսումնաւարտ երիտասարդները սակաւաթիւ բացառութեամբ սիրում են հեռու և հեռու մնալ ազգային գործերից. իսկ Աստրախանի ուսումնաւարտ երիտասարդների մէջ կարծես չկայ և բացառութիւն յօգուտ ազգային գործերի։ Սորան հակառակ Նոր Նախիջևանի հարուստները թէև թէ աւելի հակամէտ են դէպի ազգային գործերը քան թէ Ղզլարի հարուստները, իսկ Աստրախանի հարուստները աւելի ևս սակաւ։ Իբրև գեղեցիկ ապացոյց այսպիսի դրութեան կարող են համարուել այս երեք քաղաքի ազգային ուսումնարանները։ Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի ժառանգաւորաց ուսումնարանը փայլում, բաւականին ծաղկեալ դրութիւն շնորհիւ Մարդասիրական Ընկերութեան, որի անդամները, կարծեմ ամենքեանք, վաճառական են. ընդհակառակն՝ Ղզլարի ուսումնարանը ունի առաւել ևս ծաղկեալ դրութիւն շնորհիւ հոգաբարձութեան, որի բոլոր անդամները ուսումնական երիտասարդներ են. իսկ խեղճ Աստրախանը համարեա չունի ուսումնարան, ինչպէս կտեսնենք իւր ժամանակ, երբ խօսելու կլինիմ այս քաղաքի երկու երեք ծխական թշուառ դպրոցների վերայ։

Այժմ դառնանք յատկապէս դէպի Ղզլարու ուսումնարանը։ Այս ուսումնարանը զետեղուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ հոյակապ եկեղեցու ընդարձակ բակում։ Ուսումնարանի բնակարանը արտաքուստ ներկայացնում մի գեղեցիկ և բաւականին մեծ քարաշէն տուն պատշգամբով։ Սորա վերայ ծախք եղած է մօտ ինը հազար ռուբլի։ Ներսից ուսումնարանը բաղկացած է վեց սենեակից, որք առհասարակ բաւականին մեծ մեծ են և դասաւորուած են շատ յարմար կերպով։ Մտնողի վերայ ուսումնարանը գործում մի քաղցր տպաւորութիւն ոչ միայն իւր սենեակների մաքրութիւնով և առատ լուսով, այլ մանաւանդ ուսումնական պարագաներով, նորաձեւ նստարաններով, գրատախտակներով եւ հաշուակալներով, վերջապէս գիտնական միջոցներով եւ գրքերով։

Ղզլարի հոգեւոր ուսումնարանը հիմնադրուած է 1868 թուին։ Նա բաղկանում է չորս դասարանից, որոց մինը պատրաստական է։ Աշակերտների թիւը հասնում է մինչեւ 150-ին եւ ամենքեանք երթեւեկ են։

Ուսանելի առարկաները սոքա են.

Ա. Պատրաստական.

Առարկաներ.	Դասագրքեր.
1) Լեզու Հայոց. գրաւարժութիւն։	"Մայրենի լեզու" Տ. Ղեւոնդեանցի եւ "Նկատողական ուսումն" Ախվերդեանցի։
2) Լեզու Ռուսաց. գրաւարժութիւն։	«Родное слово», I годъ.

Բ. Առաջին դասատուն.

Առարկաներ.	Դասագրքեր.
1) Լեզու Հայոց. ա. մասն քերականութեան։	"Ընթերցարան" Տէր Յակոբեանցի եւ "Քերականութիւն" Պալասանեանցի։
2) Լեզու Ռուսաց. թարգմանութիւն։	Руководство теръ-Акопова
3) Թուաբանութիւն. ա. մասն։	Առանց դասագրքի։
4) Կրօն. Սրբազան պատմութիւն հին եւ նոր կտակարանի։	"Կախաշաւիղ" Տէր Յովսէփ Օրբելու եւ "Սրբազան պատմ." Տէր Ստեփան Մանդինեանցի։
5) Վայելչագրութիւն.	

Գ․ երկրորդ դասատուն.

Առարկաներ.	Դասագրքեր.
1) Լեզու Հայոց. վերջ քերականութեան։	‚‚Քերականութիւն,, Պալասանեանցի։
2) Լեզու Ռուսաց. ա. մասն քերականութեան։	«Граммат.» Иванова.
3) Ընդհանուր պատմութիւն. Հին դար։	‚‚Ընդհանուր պատմութիւն,, Իլովայսկու, թարգմանութիւն Գէորգ Վ. Սուրէնեանցի։
4) Ազգային պատմութիւն.	‚‚Պատմութիւն Հայոց,, Չերքէզեանցի և Գէորգ Աբովեանցի։
5) Աշխարհագրութիւն. Ընդհանուր գիտելիք ֆիզիքական, մաթեմաթիկական և քաղաքական աշխարհագրութիւն։	‚‚Կորնէլլի,, թարգմանութիւն։
6) Կրօն.	Նախաշաւիղ, Բ. մասն։
7) Թուաբանութիւն. Բ. մասն մինչև յարաբերութիւնը։	Առանց դասագրքի։

Դ․ երրորդ դասատուն.

Առարկաներ.	Դասագրքեր.
1) Լեզու Հայոց. գրաւոր շարադրութիւն և պատմութիւն ընդհանուր գրականութեան համառօտապէս։	‚‚Պատմութիւն գրականութեան,, Պալասանեանցի։
2) Լեզու Ռուսաց. Բ. մասն քերականութեան և թարգմանութիւն։	II Ч. «Граммат.» Иванова և II г. «Дѣтс Міръ».

3) Կրօն.	"Եկեղեցական պատմութիւն", Տէր Ստեփան Մանդինեանցի։
4) Թուաբանութիւն. վերջ, և սկզբնական գիտելիք երկրաչափութեան։ Նոյն և մասնաւոր տոմարապահութիւն։	Նալանց դասագրքի։ Դասագիրքը ռուսերէն։
5) Ընդհանուր պատմութիւն. Միջին և Նոր դար։	Թարգմանութիւն Գէորգ վարդապետի Սուրէնեանցի։
6) Աշխարհագրութիւն. ընդարձակօրէն քաղաքական և բնական։	«Географ.» Смирнова և Ободовскаго.

Ինչպէս տեսնում ենք՝ Ղզլարի ուսումնարանը ունի բաւականին ընդարձակ և միևնոյն ժամանակ հիմնաւոր և օգտակար ծրագիր։ Բայց բաւական չէ ունենալ այսպիսի կամ այնպիսի ծրագիր, այլ հարկաւոր է յաջողութեամբ և յառաջադիմութեամբ կատարել այդ ծրագիրը, որպէս զի ուսումնարանը կարողանայ հասնել իր որոշ նպատակին։ Ղզլարի ուսումնարանը, շտապում ենք վկայել ամենայն վստահութեամբ, արդարև կարողացել է կատարել այս ծանր գործը։ Իմ շրջած քաղաքների մէջ ոչ մի ուսումնարան այնչափ յառաջադէմ աշակերտներ չկարողացաւ տալ ինձ Էջմիածնի Ճեմարանի աշակերտացուներ ընտրելու համար, որչափ տուեց Ղզլարի ուսումնարանը։ Ոչ միայն նոր աւարտածները, այլ և մի տարի առաջ աւարտածները, մտնելով իմ քննութիւնների մէջ, ցոյց տուին մի կողմից շատ գոհացուցիչ ընդհանուր մտաւոր զարգացումն, միւս կողմից բաւականին հարուստ գիտութիւն սովորած առարկաների։ Աւելի արժանի էր ուշադրութեան այն որ՝ հարցաքննուող աշակերտները գրեցին իմ ներկայութեամբ իմ տուած բնաբանի վերայ հայերէն գրոց լեզուով շարադրութիւններ, որոց մէջ երևեցաւ ոչ միայն մի ամփոփ մտածողութիւն, այլ և բաւականին զոհացուցիչ և սակաւասխալ գրութիւն կամ ոճ գրաբառի։ Եւ այսպիսի յառաջադիմութիւնը ոչ թէ մի պատահմունք էր, այլ թուի թէ սովորական երևոյթ Ղզլարի ուսումնարանի համար, որովհետև ես ներկայ գտնուեցայ մի քանի առարկաների տարեկան հարցաքննութեանց ժամանակ և համոզուեցայ ուսումնարանի ընդհանուր յառաջադիմութեան մէջ, ըստ որում իւրաքանչիւր դասարանում տիրապետում էր այդ յառաջադիմութիւնը։ Ես այնու առաւել մեծ վստահութեամբ կարող եմ գովել Ղըզլարու հոգևոր միջնակարգ ուսումնարանը որ՝ տեսել էի շատ ազգային—եկեղեցական ուսումնարաններ, տեսայ նաև Վըլադիկավկասի, Մոզդոկի, Ստաւրոպօլու, Արմաւիրի, Նոր Նախիջևանի և Աստրախանի ուսումնարանները, բայց ոչ մի տեղ չգտայ Ղզլարի ուսումնարանի նմանը մանկավարժական ուղղութեամբ, արտաքին բարեվայելչութեամբ, ներքին բարեկարգութեամբ, ուսման յառաջադիմութեամբ, աշխատասէր և բարեմիտ հոգաբարձութեամբ, ուսուցիչների ընտիր խմբով, դասագրքերի յաջողակ ընտրութեամբ, և վերջապէս ուսումնական պարագաների հարստութեամբ։ Միայն Նոր Նախիջևանի սուրբ Խաչ վանքի ժառանգաւորաց ուսումնարանը նմանութիւն ունէր Ղզլարի ուսումնարանին, բայց մի քանի աստիճանով պակաս։

Ղզլարի ուսումնարանը բացի սեփական բնակարանից ունի տարեկան մուտք ընդ ամէնը մօտ երեք հազար ռուբլի, այն է՝ երկու եկեղեցիներից տարեկան 875 ռուբլի իւրաքանչիւրից, սուրբ Գէորգ վանքից 500 ռ. և աշակերտներից ուսման վարձ (ոմանք 8 ռուբլի, ոմանք 15 ռուբլի, և ոմանք 30 ռուբլի տարեկան) 500 ռուբլու չափ. աշակերտներից 75-ը ձրիավարժ են եղել։ Ահա այս աննշան արդիւնքով Ղզլարի ուսումնարանը ոչ միայն հոգում է իր բոլոր ծախքերը, այլ յաւելուած.

ունի տարեկան 3—4 հարիւր ռուբլի, պահելով մի և նոյն ժամանակ հինգ—վեց ընտիր ուսուցիչներ։

Ղզլարումը կայ նաև օրիորդաց ուսումնարան, բայց ես չկարողացայ մօտիկ կերպով ծանօթանալ նորա հետ, որովհետև ամառնային արձակուրդի և վարժուհու բացակայութեան պատճառով փակած էր նա։ Իսկ հաւատարիմ մարդիկների բերանից լսեցի որ՝ այս ուսումնարանը նոյնպէս յառաջադէմ է, և ես վստահութեամբ հաւատացի այդ վկայութեան, որովհետև սա գտանվում է մինևնոյն տղայոց ուսումնարանի հոգաբարձութեան հովանաւորութեան տակ։ Ի դէպ՝ հարկաւոր եմ համարում աւելացնել որ՝ որովհետև օրիորդաց ուսումնարանի բնակարանը վարձովի է, ուստի ցանկութիւն էր յառաջացել չինել առանձին տուն այդ ուսումնարանի համար։ Մինչդեռ հարկաւոր նիւթերը պատրաստուած էին, յանկարծ ծագել էր տարաբախտաբար մասնաւոր տարաձայնութիւն և հակառակութիւն եկեղեցիների թաղականների մէջ։ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու թաղականները և մանաւանդ ինքն հոգաբարձութիւնը, ի նկատի ունենալով տեղի յաջողակ դրութիւնը, հոգաբարձութեան համար վարչութեան դիւրութիւնը և յարմարութիւնը, որը փոքր նշանակութիւն չունի ուսումնարանի համար, և առաւել ևս մի քանի ուսուցիչների գտնուելութիւնը երկու ուսումնարանի մէջ, հարկաւոր էին համարել օրիորդաց ուսումնարանի տունը չինել նոյն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու բակում, ուր զետեղուած է և տղայոց ուսումնարանը։ Իսկ Աստուածամայր եկեղեցու թաղականները ի նկատի առնելով որ՝ սա է քաղաքի մայր եկեղեցի և նորա շրջականներում բնակվում են միջնակարգ և աղքատ ժողովուրդ, որի աղջկերանց համար աւելի հարկաւոր է ուսումը, պահանջել էին օրիորդաց ուսումնարանը չինել նոյն Աստուածամայր եկեղեցու բակում։ Երկու կողմը ես ունենալով իւրեանց յարգելի պատճառները—միաբանութիւնը և հաշտութիւնը չէր կայացել։ Նոյն միջոցներին Ղզլար ժամանում, պաշտօնական այցելութիւն անելու համար Աստրախանայ Առաջնորդ Գերապատիւ Գէորգ Արքեպիսկոպոսը։ Ժողովուրդը կամենալով օգուտ քաղել այս հանգամանքից դիմում դէպի իւր Առաջնորդը խնդրելով լուծել այս կնճռոտ խնդիրը և խաղաղութիւն և հաշտութիւն հաստատել երկու կողմի մէջ։ Բայց Առաջնորդը պատասխանում թէ, երբ կվերադառնայ Աստրախան, այն տեղից կանէ գրաւոր կարգադրութիւն, որը մինչև այժմ կարծեմ դեռ չէ կատարած։

Երկու խօսք և իմ յանձնարարութեան մասին։ Ես ընտրեցի Ղզլարի ուսումնարանի մէջ աւարտած երիտասարդներից երկու աշակերտ Ս. Էջմիածնի Ճեմարանի համար։ Սոքա պիտի լինեին քաղաքի որդեգիրներ։ Ժողովուրդը երկու անգամ լսելով իմ քարոզները սուրբ եկեղեցու մէջ այս Ճեմարանի նպատակի մասին, այն աստիճան մեծ համակրութիւն ցուցեց դէպի Վեհափառ Հայրապետի խորիմաստ ձեռնարկութիւնը որ՝ մեծապատիւ քաղաքագլուխ Սոմաջանեանցի հոգացողութեամբ երկու անգամ ժողով կազմելով ուսումնարանի դահլիճում՝ համախօսական վճռով սահմանադրեց՝ առանձին հոգաբարձութեան ձեռքով ժողովել ամենայն տարի այգեքաղի ժամանակ քաղցու և վաճառելով այն՝ ստացած գումարից տարեկան 300 ռուբլի ուղարկել Էջմիածնի Ճեմարանին իբրև մի որդեգրի ուսման վարձ, իսկ մնացած դրամը զետեղել քաղաքային դրամատան մէջ, և այսպիսի ժողովարարութիւնը շարունակել այնքան տարի մինչև որ՝ կկազմուի մայր գումար 600 ռուբլի տարեկան տոկոսիքով, որպէս զի այդ տոկոսիքով պահպանուի Էջմիածնի Ճեմարանում մշտապէս երկու որդեգիր Ղզլար քաղաքից։ Բացի սորանից՝ նոյն քաղաքի բնակիչ Իսայի Իզմիրեանցն, որը աՀա քանի տարի է թողնելով իւր մեծ հարստութիւնը և ընտանիքը ճգնաւորական կեանք է վարում Սևանի վանքում, իւր կողմից խոստացել է տարէ ցտարի հատուցանել Ճեմարանին 300 ռուբլի, որպէս զի նորա մէջ պահվի Ղզլարի չքաւոր մանուկներից մի որդեգիր ''Իւղչէշեան,, անունով: Վերջապէս 40-ի չափ բարեպաշտ և ազգասէր անձինք նուիրեցին առանձին ժամանակներում մասնաւորով յօգուտ Էջմիածնի Ճեմարանին 1094 ռուբլի:

Մեզ համար սուրբ պարտաւորութիւն ենք համարում հրապարակաւ յայտնել մեր ջերմեռանդ շնորհակալութիւնը Ղզլարի ամբողջ ժողովրդին և մանաւանդ տեղական Գերապատիւ Յաջորդ Ադամ վարդապետին, քաղաքագլուխ Գասպար Մամաջանեանցին և ուսումնարանի հոգաբարձութեան թէ նոցա ընդհանուր ազգասիրական և կրօնական զգացմանց համար և թէ մասնաւորապէս այն համակրութեան համար, որը ցուցին Էջմիածնի Ճեմարանին և որով առաւելութեամբ պսակեցին իմ նուաստութեան աշխատութիւնը:

Աւարտելով մեր խօսքը՝ հարկաւոր ենք համարում աւելացնել, որ՝ բարեմիտ և քրտնաջան հոգաբարձութիւնը մի կողմից՝ առանց անձնական փառասիրութեան տեսնելով իւր ուսումնարանի յառաջադիմութիւնը, միւս կողմից այն որ՝ Աստրախանում շատ և շատ տարիներից յետոյ հազիւ կարող է հաստատել մի թեմական Դպրանոց, դիմեց առ Նորին Օծութիւնը ամենախոնարհ խնդրքով՝ բարեհաճել թոյլ տալ ընդարձակել ուսումնարանի ուսման շրջանը փոքր առ փոքր նորան ի թեմական Դպրանոց վերածելոյ համար մինչև որ կըհաստատուի սահմանեալ կարգով նաև կանոնադրութիւնը: Նորայս Սրբազնագոյն Կաթողիկոսը բարեհաճեցաւ տալ իւր հաճութիւնը դեռ անցեալ 1874 թուականի վերջերում: Այս գործի մէջ մենք՝ ըստ խնդրանաց մի հոգաբարձուի՝ չխնայեցինք մեր նուաստ միջնորդութիւնը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լուսաւորութեան Նախարարութեան ուսումնարանների վերայ:

(Ժ.—ռ.—Ն.—Լ.—Մ.—Ն., տես ԴՊՐՈՑ, № 7 մասն Ա. եր. 251-254)

2. Միւս Բարձրագոյն ուսումնարաններ:

Համալսարաններից յետոյ երկրորդ տեղը բռնում են իբրև նոյնպէս բարձրագոյն ուսումնարաններ — մի քանի ճեմարանները (Ինստիտուտ) և Լիցէոնները: Այս տեսակ ուսումնարաններ Լուսաւորութեան Նախարարութիւնը ունեցել է նոյն 1872 թ. միայն 8 հատ, որք են — 1) Կայսերական պատմական — Լեզուաբանական ճեմարան (Ինստիտուտ) Պետերբուրգում (պատրաստում ուսուցիչներ միջնակարգ ուսումնարանների համար), 2) Դեմիդովեան իրաւաբանական Լիցէոն Եարոսլավլ քաղաքում (պատրաստում իրաւաբաններ), 3) Իշխան Բէզբորոդկոյի Լիցէոն Նեժին քաղաքում (նոյնպէս պատրաստում իրաւագէտներ), 4) Լազարեան ճեմարան Մոսկուայում (այսինքն երեք վերին մասնագիտական դասարաններ արևելեան լեզուների համար), 5), 6) և 7) Անասնաբուժական ուսումնարաններ Խարկովում, Դորպաթում և Վարշավայում (պատրաստում են անասնաբոյժներ), և 8) ճեմարան (Ինստիտուտ) շինական տնտեսութեան և անտառապահութեան Նոր Ալեքսանդրիայում (պատրաստում շինական տնտեսներ):

Այս բոլոր 8 ուսումնարանի մէջ 1872 թ. եղել են ուսանողներ միայն 872, (իսկ աւարտողների թիւը չէ ցուցած հաշվում)։ Առաջին ուսումնարանում տէրութեան հոգևոր վարչութիւնը պահում է հինգ որդեգիր Հոգևոր Դպրոցների (Սեմինարիաների) համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով։ Բեզբարոդկոի Լիցէոնը, ըստ վկայութեան Նախարարի, գտանվում է անկման վիճակի մէջ։

Միջնակարգ ուսումնարաններ։

3. Մասնագիտական ուսումնարաններ։

Միջնակարգ ուսումնարանները կազմում են ազգային լուսաւոր զարգացման կեդրոնական ոյժը, որովհետև սովորողների մեծագոյն մասնի ուսման ընթացքը այս տեղ է դադարում, և միայն շատ նուազ մասն դիմում է դէպի բարձրագոյն ուսումնարանները։

Լուս. Նախարարութիւնը 1872 թ. ունեցել է 4 հատ միջնակարգ մասնագիտական ուսումնարաններ — 1) արուեստագիտական ուսումնարան Լօդզիում, 2) վաճառականութեան գիտութեանց ուսումնարան Օդէսսայում, 3) և 4) երկու ուսումնարան Հրէաների համար րաբունիններ պատրաստող՝ Վիլնայում և Ժիտոմիրում։ Բոլոր չորս ուսումնարանի մէջ եղել են 1,164 սովորողներ. առաջինում աշակերտներն 4, երկրորդում 40, իսկ միւս երկուսի մէջ աշակերտողների թիւը չէ ցուցած հաշուի մէջ, ինչպէս և ծախուց գումարը։

4. Գիմնազիաներ։

Լուս. Նախարարութիւնը 11 ուսումնական շրջանում ունեցել է 1872 թ. 122 արական գիմնազիաներ, որոց մէջ եդել են 39,270 աշակերտներ։ Սոցանից տարու ընթացքում թողել են գիմնազիաները առանց ուսումը աւարտելու 6,152, ուսումը աւարտած միայն 946. ուրեմն այն ինչ չաւարտողը գալիս է 1 հազարի վերայ 150, աւարտողը գալիս է 1 հազարի վերայ հազիւ թէ 25։

Բոլոր գիմնազիաների վերայ ընդհանուր ծախք եղած է 3,240,979 ռուբլի, ուրեմն ամեն մի գիմնազիայի վերայ միջին թւով 34,762 ռուբլի, իւրաքանչիւր աշակերտի վերայ մօտ 107 ռուբլի, իւրաքանչիւր աւարտողի վերայ մօտ 4,500 ռ.։

Վերոցուցեալ ընդհանուր ծախուց գումարից արքունի գանձարանը տուել է 2,996,081 ռուբլի, իսկ այլ և այլ աղբիւրներից ստացուել է 1,244,898 ռուբլի, միասին 4,240,979 ռուբլի. մասնաւոր աղբիւրների մէջ նշանաւոր տեղը բռնում են — ուսման վարձը երթևեկ աշակերտներից 330,000 ռուբլի, նուիրած գումարների տոկոսիքը 125,000 ռուբլի և այլն։

5. Պրօգիմնազիաներ։

Լուս. Նախարարութիւնը 1872 թ. ունեցել է 33 պրօգիմնազիաներ, որոց մէջ եղել են 4,789 աշակերտներ։ Սոցանից դուրս են եկել ուսումնարանից ուսումը չաւարտած 787, ուսումը աւարտած 314. միասին 1,098. ուրեմն 1 հազարի վերայ ուսումը չաւարտած — 190, ուսումը աւարտած — 70։

Բոլոր պրօգիմնազիաների վերայ ծախք եղած է արքունի գանձարանից 358,263 ռուբլի, իսկ այլ և այլ աղբիւրներից — 101,306 ռուբլի, միասին — 459,569 ռուբլի։ Մասնաւոր աղբիւրների մէջ նշանաւոր տեղը բռնում է ուսման վարձը երթևեկ աշակերտներից — մօտ 35,000 ռուբլի գաւառական հասարակութիւնից (զէմստվա) մօտ 58,000 ռուբլի։ Ամեն մի պրօգիմնազիայի վերայ գալիս է ծախք մօտ 15,000 ռուբլի, ամէն մի աշակերտի վերայ մօտ 95 ռուբլի, ամէն մի ուսումն աւարտողի վերայ մօտ 1,460 ռուբլի։

* * *

6. Ռէալական ուսումնարաններ։

Ինչպէս յայտնի է, մի ժամանակ ռուս մանկավարժութեան մէջ խնդիր յարուցուեցաւ թէ՝ ի՞նչ տեսակ ուսումնական կազմակերպութիւն հարկաւոր է տալ տէրութեան միջնակարգ ուսումնարաններին։ Կարծիքները բաժանուեցան երկու գլխաւոր մասի։ Մինչդեռ մի կողմը՝ նայելով խնդրոյ վերայ գործնական աչքով և ի նկատի ունենալով կայսրութեան բնական հարստութիւնները և սոյն արտադրութեան անզարգացութիւնը,—համառօտամբ թէ կարի հարկաւոր է առաւելութիւն տալ բնական գիտութեանց, միւս կողմը պահանջում էր ծայրագոյն առաւելութիւն տալ կլասիքական ուղղութեան, այն է՝ հին լեզուների (լատինի և յոյնի) ուսման։ Տէրութիւնը ընտրեց միջին ճանապարհը, այն է՝ կամենալով հաշտեցնել հակառակութեան երկու միմեանց հակառակ պահանջները, նա ընդունեց կլասիքական ուղղութիւնը խոշոր առաւելութեամբ և մասնաւոր սահման տուեց բնական գիտութեան կլասիքական գիմնազիաներին և պրոգիմնազիաներին տարբեր դասարաններում։ Բայց այսպիսի ուղղութիւնը չէր կարող լիակատար գոհունակութիւն տալ այն կուսակցութեան, որը՝ աչքի առաջն ունենալով տէրութեան և ժողովրդի նիւթական ապահովութիւնը, իրաւացի պաշտպանումէր և պահանջումէր ռէալական ուղղութիւն։ Տէրութիւնը առանց ուշադրութեան չթողնելով ռէալական ուղղութեան խնդիրը՝

վերջապէս հաստատեց ի 12 Մայիսի 1872 Թ. նոր կանոնադրութիւն ռէալական ուսումնարանների համար, որով ստացան նոքա ինքնուրոյն, իւրեանց յատուկ նշանակութիւն և ուղղութիւն, և որով՝ ինչպէս ասում է Նախարարը հաշուի մէջ՝ „Շուտով կլրանայ յոյժ զգալի պակասութիւնը, որը կար մինչև այժմ տէրութեան ուսումնարանների ընդհանուր շաղկապի մէջ„ (2)։

Հազիւ թէ հրատարակուած էր այս նոր օրէնքը և մի և նոյն 1872 Թ. վերջերում Նախարարութիւնը ստացել է ամբողջ քառասուն միջնորդութիւն գաւառական (զէմստվա) և քաղաքային հասարակութիւններից ռէալական ուսումնարաններ հաստատելու մասին։ Այդ հաշւում 24 տեղից խոստացել էին նոյն ուսումնարանների հաստատութեան համար միանուագ 280 հազար ռ. և 12 տուն (մինչ 100 հազար ռուբ. արժողութեամբ), և ամենայն տարի նոցա պահպանութեան համար 100 հազար ռուբլի։ Իսկ Նախարարութիւնը մինչև նոյն 1872 թուի վերջը, այն է՝ հինգ – վեց ամսում կարողացել է պատրաստել 7 ռէալական ուսումնարան նոր կանոնադրութեան հիման վերայ կազմակերպած։ Այդ 7 ուսումնարանի մէջ եղել են 1752 աշակերտ, որոնցից դուրս են եկել առանց ուսումն աւարտելու 155, ուսումն աւարտած 85։ Նախարարի հաշուի մէջ չէ որոշած այդ ուսումնարանների ծախքը։

Պէտք է աւելացնել որ՝ բոլոր գիմնազիաների, պրոգիմնազիաների և ռէալական ուսումնարանների մէջ 1872 Թ. պակաս են եղել 151 ուսուցիչներ, այն է՝ կրօնուսոյց 2, ռուսերէն լեզուի 26, լաթ. և յունարէն լեզուների 56, պատ. և աշխար.

---

(2) Журн. М. Н. Просв. Յուլիս, եր. 1։

19, բնական գիտութեանց 8, Փրանս. և գերման. լեզուի 17, Թուաբանութեան 14, Նկարչութեան և գծագրութեան 9։

* * *

7. Գիշերօթիկ ուսումնարաններ (պանսիոններ)։

Լուս. Նախարարութիւնը նոյն 1872 թ. ունեցել է միջնակարգ ուսումնարաններից մի քանիսի հետ կից գիշերօթիկ մասներ — պանսիոններ։ Պանսիոններ եղել են 42, սոցա մէջ գիշերօթիկ և երթևեկ աշակերտներ 3,374։ Հաշւի մէջ չէ ցուցած ոչ աւարտողների թիւը և ոչ պանսիոնների վերայ եղած ծախքը։

* * *

8. Այլադաւան եկեղեցական ուսումնարաններ։

Միջնակարգ ուսումնարաններին վերաբերվում են և մի քանի այլադաւան եկեղեցական ուսումնարաններ։ Լուս. Նախարարութիւնը ունեցել է 1872 թ. երեք այդպիսի ուսումնարան Պետերբուրգում — Ս. Պետրոսի, Ս. Աննայի և Րէֆօրմատական եկեղեցու (երեքն էլ գերմանական են)։ Սոցա արքունի գիմնազիաների հետ համարեա համահաւասար դրութիւն ունին թէ ըստ ուսման շրջանի և թէ ըստ արտօնութեանց աշակերտների։ Ամէն մինը ունի երկու բաժանմունք — կլասիքական և րէալական. նոյնպէս ամէն մինը ունի նաև առանձին իգական մասն աղջկերանց համար։ Երեք ուսումնարանք միասին ունեցել են 1872 թ. արական մասնում 1351 աշակերտ — 631 կլասիքական և 720 րէալական, սոցանից աւարտել են կլասիքական 24, րէալական 11, միասին 35։ Իգական մասնում նոցա ունեցել են 558 աշակերտուհի։ Նախարարը գոհունակութիւն է յայտնում այս երեք ուսումնարանի մասին, ասելով ''Ձեռնտու լինելով տարածել հիմնաւոր ընդհանուր գիտութիւն և տալով ամենայն տարի տէրութեան բարձրագոյն ուսումնարաններին ոչ սակաւ մասն լաւ պատրաստած ուսանողների, այս ուսումնարանների մէջ ընդունվում են նաև ռուսադաւան մանուկներ, որոց թիւը 1872 թ. էր 540,, (3)։

9. Գաւառական դպրոցներ (ուեզդնիեա ուչիլիշչա)։

Մի ժամանակ կայսրութեան գաւառներում և մանաւանդ քաղաքներում ամենից շատ տարածուած էին գաւառական դպրոցները։ Սոցա կանոնադրութիւնը հաստատուած էր 1828 թ. և այնուհետև մնում էր համարեա անփոփոխ։ Սոքա թէ բազմամարդ և թէ սակաւամարդ տեղերում պիտի ունենային անպատճառ 3 դասարան։ Այս դպրոցները այն աստիճան անյաջող էին որ՝ վաղուց հասարակութիւնը և ինքն տէրութիւնը զգում էին սոցա կերպարանափոխութեան կարօտութիւնը։ Վասն որոյ 1872 թ. Մայիսի 31-ին տէրութիւնը հաստատեց նոր կանոնադրութիւն քաղաքային դպրոցների մասին, որք և պիտի բռնեն գաւառական դըպրոցների տեղը։ Տէրութիւնը թէև որոշել էր հին գաւառական դպրոցներին տալ քաղաքային դպրոցների կազմակերպութիւն, բայց անհնարին գտաւ իսկոյն կատարել այդ ուսուցիչների պակասութեան պատճառով, ինչպէս ասում է, Նախարարը թէ՝ «բոլոր երկրների փորձը անհերքելի կերպով ապացուցեց որ՝ դպրոցական գործը միայն այն ժամանակ կարող է յաջող ընթանալ, երբ կան լաւ ուսուցիչներ» (4)։ Այդ ծանրակշիռ հանգամանքը ստիպել է՝ մի կողմից — հաստատել 7 վարժապետանոց, և միւս կողմից—գաւառական դպրոցների կազմակերպութեան մտադրած փոփոխութիւնը սկսել 1874 թ. երկրորդ կէսից։ Նախարարը յայտնում է յոյս որ՝ երբ բոլորովին պատրաստ կլինին 7 վարժապետանոցները, նորա կտան ամենայն տարի 140-ից մինչև 175 ուսուցիչ քաղաքային դպրոցների համար։

---

(3) Жур. М. Н. Пр. Յուլիս, երես 6։

Լուս. Նախարարութիւնը 1872 թ. ունեցել է 423 գաւառական դպրոց 29,709 աշակերտներով։ Սոցանից դուրս են եկել դպրոցներից ուսումը չաւարտած 6,526, իսկ ուսումը աւարտած 3,206 աշակերտ։ Այս բոլոր դպրոցների վերայ տէրութիւնը ունեցել է ծախք տարեկան 940,067 ռուբլի, ուրեմն ամէն մինի վերայ մօտ 2,225 ռուբլի, նոյնպէս ամէն մի աշակերտի վերայ մօտ 32 ռուբլի, ամէն մի աւարտողի վերայ մօտ 295 ռուբլի։

Բաց հանելով Դորբաթի և Վարշավայի ուսումնական շրջանների (նահանգ) գաւառական դպրոցները, թուով միայն 20, մնացած 403 գաւառական դպրոցներին Տէրութիւնը մտադիր է տալ քաղաքային դպրոցի կազմակերպութիւն, այսպէս՝ 25—չորս դասարանաւոր, 75—երեք դասարանաւոր, և մնացած 203—երկու դասարանաւոր, նշանակելով բոլորի համար 1009505 ռուբլի տարեկան ծախք։

---

(4) Жур. М. Н. Прос. Յուլիս երես 10։

10. Սկզբնական ժողովրդական դպրոցներ:

Մի ազգի ընդհանուր մտաւոր զարգացման, մի տէրութեան քաղաքական յառաջադիմութեան հիմունքը ժողովրդական դպրոցն է, ուստի որչափ շատ են այդ դպրոցները և որչափ աւելի յառաջադէմ են նոքա, նոյնչափ աւելի բարձր է ամբողջ ազգի մտաւոր զարգացման աստիճանը, նոյնչափ աւելի ապահովացրած է նորա և տէրութեան ամենատեսակ բարօրութիւնը: Այս սկզբունքը դառել է լուսաւորեալ երկրներում իբրև մի աւետարանական ճշմարտութիւն և ամենայն տեղ թէ տէրութիւնները և թէ հասարակութիւնները չեն խնայում ոչ աշխատանք և ոչ ծախք բարեկարգ ժողովրդական դպրոցների թիւը բազմացնելու համար:

Մեր տէրութիւնը յետ չէ մնում միւս տէրութիւններից: Լուս. Նախարարութիւնը 1872 թ. ունեցել է 19,658 ժողովրդական դպրոց, սոցանից՝ քաղաքային երկու դասարանաւոր—224, մի դասարանաւոր—1,629, գիւղական երկու դասարանաւոր—105, մի դասարանաւոր 17,700, իսկ սոցանից եկեղեցական—ծխական՝ 1,165:

Բոլոր 19,658 դպրոցներում եղել են սովորողներ 761,129, սոցանից արական սեռի—625,784, իգական սեռի—135,345: Դպրոցներից դուրս են եկել ուսումը աւարտած 42,376, ուրեմն մի հազարի վերայ 60 աւարտող: Չաւարտած դուրս եկողների թիւը չէ ցուցած Նախարարի հաշվում:

Միջին թուով 19 հազար դպրոցների վերայ 1872 թ. ընդհանուր ծախք եղած է 4,235,382 ռուբլի, ուրեմն ամեն մէկի վերայ մօտ 225 ռ. բայց իսկապէս դպրոցների ծախքը չէ եղել հաւասար: Զոր օրինակ՝ Պետերբուրգի ուսումնական շրջանի 26 հատ երկու դասարանաւոր քաղաքային և գիւղական դըպրոցների վերայ եղել է ծախք 38,000ռ., այսինքն ամեն մէկի վերայ մօտ 1,420, ռ. իսկ մի դասարանաւոր 1,870 դպրոցի վերայ 304,000 ռ. ուրեմն ամէն մէկի վերայ մօտ 160 ռուբլի։ Բայց և այստեղ չկայ հաւասարութիւն, որովհետև գիւղական դպրոցներից մեծ մասը, ինչպէս վկայում է Նախարարը, ունեցել են 100 ռուբլուց պակաս, իսկ սոցա մէջ եղել են և այնպիսիներ, առաւելապէս ծխական - եկեղեցական դպրոցներ, որք ունեցել են միայն 20, 10 և մինչև անգամ 5 ռուբլի մուտք։

Վերջիշեալ 4,235,382 ռուբլի գումարից արքունի գանձարանը տուել է միայն 739,285 ռուբլի, իսկ մնացեալ 3,496,097 ռուբլի գումարը ստացուել է զանազան աղբիւրներից, որոց մէջ ամենախոշոր տեղը բռնած ունի զեմստվայից տուած գումարը 1291054 ռուբլի, որը համարեա երկու անգամ շատ է տէրութիւնից տուած գումարից։

Թէ որչափ անդոհացուցիչ դրութեան մէջ է դեռևս Ռուսիայում ժողովրդական դպրոցի գործը, յառաջ ենք բերում նոյն իսկ Նախարարի վկայութիւնը։

«Վերջերս թիւը (ասում է Նախարարը) բոլոր սկզբնական դպրոցների, որը հասնում է 19,000-ին, եթէ աւելացնենք մինչև 25,000-ը հաշուելով նաև նոյն թւի մէջ չմտած դպրոցները, պիտի համարուած լինի շատ քիչ համեմատելով բոլոր բնակիչների թւի հետ . . . Պետերբուրգի (ուսումնական) շըրջանի նահանգներում արական և իգական սեռի 3,631,879 բնակիչների համար կայ սկզբնական ժողովրդական դպրոցներ 1,900 հատ և նոցա մէջ սովորողներ 44,756 (36,877 տղայք և 7,879 աղջիկունք), այսինքն՝ 1,911 հոգու վերայ միայն 1 դպրոց և 81 հոգու վերայ 1 սովորող . . . Այսպիսի թւերի ողորմութիւնը (լոյծ սակաւութիւնը) աւելի նկատելի է լինում եթէ բաղդատութիւն անենք Եւրոպայի լուսաւորեալ երկրների հետ, ուր, ինչպէս զոր օրինակ Պրուսիայում, լինում է 1 ժողովրդական դպրոց 500 հոգու վերայ և 1 սովորող 6 հոգու վերայ։

''Ընդհանուր թւով՝ մեր (տէրութեան) ժողովրդական դըպրոցը ներկայացնում, համեմատաբար քիչ մխիթարողական բան և իւր յատկութեանց կողմից։ [illegible] (5)։ Բայց մեր (տէրութեան) ժողովրդական դպրոցների մեծագոյն մասը ստիպուած է բաւականանալ առ այժմ, ինչպէս բացատրուած կլինի յետոյ, կիսագրագէտ ուսուցիչներով։ Լիակատար նիւթաւոր ապահովութիւն, բացի Ժ. ուս. Նախարարութեան դպրոցներից, ունին համեմատաբար միայն շատ սակաւ դպրոցները, որք պահպանւում են զեմստվաների, հասարակութիւնների և մասնաւոր անձինքների կողմից, իսկ մեծագոյն մասը այդ տեսակ դպրոցների ունին շատ սահմանափակ մուտք, իսկ եկեղեցական—ծխական դպրոցները շատ անգամ մնում են և բոլորովին առանց մուտքի (արդիւնքի)։ Այս պատճառով սոյն տեսակ դպրոցները, որք կազմում են մեծագոյն մասն, չեն կարող ունենալ ոչ լաւ ուսուցիչներ, ոչ կարևոր ուսումնական պարագաներ, և ոչ մինչև անգամ փոքր ինչ գոհացուցիչ բնակարաններ,, (6)։

---

(5) Կամենալով ընթերցողի առանձին ուշադրութիւնը դարձնել Նախարարի նշանաւոր խօսքերի վերայ գիտմամբ նոտր գիր գործածեցինք։

(6) Журн. М. Н. Пр. Յուլիս, եր. 14։

II. Վարժապետանոցներ։

Արդէն անհերքելի ճշմարտութիւն է այն գաղափարը որ՝ մի ուսումնարանին կեանք տուողը, նորա յառաջադիմութեան միակ միջոցը, նորա հոգին լաւ պատրաստած ուսուցիչն է։ Այս գաղափարը նոյնպէս նոր ժամանակի ծնունդ է, բայց և այնպէս փոքր ի շատէ բարեկիրթ ազգութեան մէջ արդէն տասնաւոր և հարիւրաւոր վարժապետանոցներ կան զանազան կարգի ուսումնարանների համար ընտիր ուսուցիչներ պատրաստելու նպատակով։ Մեր ազգութիւնը նոյնպէս դարձրեց իւր ուշադրութիւնը վարժապետանոցների վերայ։

Լուս. Նախարարութիւնը 1872 թ. ունեցել է այլ և այլ տեսակ վարժապետանոցներ ընդ ամէնը 52, այն է վարժապետական Ինստիտուտ — 2, վարժ. Սեմինարիա — 28, վարժ. ուսումնարան արական սեռի — 7, վարժ. ուսումնարան իգական սեռի — 4, մանկավարժական մասներ գիմնազիաների և գաւառական դպրոցների հետ — 8, մահմետական վարժ. դպրոց — 2, Եկատերինեան վարժապ. Ինստիտուտ — 1։ Սոցա բոլորի մէջ եղել են միայն 2.552 սովորողներ։ Սովորողներից դուրս են եկել ուսումը չաւարտած — 232, ուսումը աւարտած — 213։

Բոլոր 52 վարժապետանոցի վերայ ընդհանուր ծախք 1872 թ. եղած է 603.213 ռուբլի, այն է՝ արքունի գանձարանից — 399,625 ռ. և այլ և այլ աղբիւրներից — 203.588 ռ. այդ աղբիւրների մէջ նշանաւոր տեղը պատկանում է, զեմստվային — 132.032 ռուբլի։ Ուրեմն միջին թուով իւրաքանչիւր վարժապետանոցի վերայ ծախք եղած է մօտ 11,620 ռ., իւրաքանչիւր վարժապետացու սովորողի վերայ մօտ 236 ռ., իսկ իւրաքանչիւր աւարտող վարժապետի վերայ մօտ 2.832 ռ.։

Թէ որչափ աննշան է վարժապետանոցների և նոցանից դուրս *եկած վարժապետների թիւը Ռուսաստանի համար, յառաջ բերենք նոյն իսկ Նախարարի խօսքերը: „Ի նկատի առնելով կայսերութեան բնակիչների ահագին բազմութիւնը, որը պահանջումէ շատ մեծ քանակութիւն ժողովրդական դպրոցների, և բաղդատելով Գերմանիայի հետ, ուր 40 միլիօն ժողովրդի համար կայ 145 վարժապետական Սեմինարիաներ, չէ կարելի յոյժ սակաւ չհամարել մեր (Ռուսիոյ) վարժապետական Սեմինարիաների թիւը: Զիջելով Սիբիրիան, ուր կայ միայն 2 վարժ. Սեմինարիա և ուր չկան ոչինչ այլ միջոցներ ուսուցիչներ պատրաստելու համար, կեդրոնական և արևմտեան նահանգները շատ մեծ կարօտութիւն ունին ուսուցիչների մասին: Պետերբուրգի, Մոսկուայի, Խարկովի, Կիէվի և Օդէսսայի ուսումնական շրջանների նահանգներում կան մինչև 11,000 սկզբնական ժողովրդական դպրոցներ, որոնցից 1872 թ. ըստ յայտարարութեանց ժողովրդ. դպրոցների տեսչաց՝ 532 դպրոցում ամենևին չեն եղել ուսուցիչներ, իսկ 3,138 դպրոցում այդ պաշտօնը վարումէին այնպիսի անձինք, որք բոլորովին համապատասխան չէին ուսուցչական կոչման — կիսատ գրագէտ գիւղացիներ, գաւառական գրագիրներ և ծառայութիւնից դուրս եկած ստորին պաշտօնեաներ (զինուորներ), որք բոլորովին պատահմամբ մտել են մանկավարժական գործի մէջ և առաջ երբէք չեն մտածել նորա վերայ. . . . : Ուստի ակամայ կամօք հարկաւոր է լինում տանել (պահել) սոցա, որպէս զի չշատանան միանգամայն առանց վարժապետների մնացած դպրոցները,, (7):*

---

(7) Жур. М. Н. Прос. *Յուլիս, երես* 18—19:

12. Իգական ուսումնարաններ:

Արդէն յայտնի է ամենեցուն որ՝ իգական սեռի մտաւոր զարգացումն կազմում է վէմ անկեան ամբողջ ազգի մտաւոր զարգացման և նորա ու նոյն իսկ տէրութեան քաղաքական և այլ ամենատեսակ յառաջադիմութեան և բարօրութեան: Այս կողմից դարուս ոգին ընդհանրապէս և մանկավարժական գիտութեան ազդեցութիւնը մասնաւորապէս կատարեցին արդարև հսկայական քայլեր: Դեռ շատ հեռու չեն մեզանից այն ժամանակները, երբ իգական սեռի մտաւոր զարգացման գործը համարվում էր մի աւելորդ խնդիր, մի վնասակար գործ, մի անօգուտ շռայլութիւն, և այն ժամանակներում օրիորդական դպրոցները մի հազուագիւտ բան էին: Բայց ամենայն դարու իմաստուն մարդիկ միշտ դարձնում էին իւրեանց ուշադրութիւնը իգական սեռի խորհրդաւոր կոչման վերայ և միշտ քարոզում էին լայնացնել այդ սեռի ամենատեսակ՝ ընտանեկան, քաղաքական, մտաւոր զարգացման, և այլն, իրաւունքները, տալ այդ սեռին համահաւասար ազատութիւն և գործունէութեան ասպարէզ արական սեռի հետ միասին: Այս մտքերը վերջապէս յաղթող հանդիսացան, և ահա այժմ տեսնում ենք կանայք արքունի պաշտօնների մէջ, հասարակական գործերի մէջ, հաշտարար դատաւորի աթոռի վերայ, և այլն, և այլն: Այսպիսի հեղափոխութեան շնորհիւ արդէն ինքն ըստ ինքեան անկարելի էր առանց ուշադրութեան թողնել իգական սեռի մտաւոր զարգացման խնդիրը, ուստի օր ըստ օրէ սկսեցին բազմանալ Եւրոպայում բարեկարգ և ուսումնական բաւականին լայն շրջան ունեցող օրիորդական դպրոցները:

Ռուսաստանը և այս խնդրոյ մէջ յետ չէ մնում լուսաւորեալ երկրներից: Ռուս. Նախարարութիւնը 1872 թ. ունեցել է իգական գիմնազիա—55, գիմնազիական աստիճան ունեցող ուսումնարան—2, իգական պրոգիմնազիա—116, և պրոգիմնազիայի նման իգական դպրոցներ—15, բոլորը միասին 188 ուսումնարան։ Սոցա մէջ սովորողներ եղել են 23.854 և ուսման շրջանը լրիւ աւարտել են—1.126։

Բաղդատելով այս թուերը, նաև աւելացնելով սոցա վերայ մինչև անգամ այլ և այլ վարչութեանց և մանաւանդ Մարիամ Կայսերուհու վարչութեան ներքոյ եղած բաւականին բազմաթիւ իգական դպրոցները,—Կայսերութեան բազմամիլիոն իգական սեռի բնակիչների թուի հետ, մենք պիտի տեսնենք որ Ռուսաստանի մէջ իգական սեռի մտաւոր զարգացման գործը գտանվում է դեռևս մատաղ հասակի մէջ, բայց ունի զարգանալու արագ քայլերով։

Վերոյիշեալ 188 իգական ուսումնարանների վերայ 1872 թ. ծախք եղած է 1.082.081 ռուբլի. սոցանից արքունի գանձարանը տուել է—373.056 ռուբլի, իսկ մնացեալ 709.025 ռուբլի գումարը ստացուել է այլ և այլ աղբիւրից, որոց մէջ նշանաւոր տեղը պատկանում է ուսման վարձին—251.949 ռ., իսկ զեմստվան տուել է միայն 126.574 ռուբլի։ Բաղդատելով այս 126.574 ռուբլի գումարը ժողովրդական արական դպրոցների համար զեմստվայից տուած 1,291,054 ռ. ահագին գումարի հետ, մենք տեսնում ենք որ՝ զեմստվան (նահանգական և գաւառական ժողովրդական կառավարութիւն) դեռևս աւելի հոգում է արական սեռի, քան թէ իգական սեռի մտաւոր զարգացման վերայ։

Ընդհանուր ծախքը 1.082.081 ռ. բաժանելով 188 իգական ուսումնարանների վերայ, մենք տեսնում ենք որ՝ իւրաքանչիւրի վերայ գալիս է մօտ 5,755 ռ., իսկ իւրաքանչիւր սովոբողի վերայ մօտ 45 ռ., և իւրաքանչիւր աւարտողի վերայ մօտ 960 ռուբլի։

13. Մասնաւոր ուսումնարաններ։

Ինչպէս ամենայն գործի մէջ, նոյնպէս և մտաւոր զարգացման գործի մէջ, բարոյական մրցումն տալիս է միշտ նշանաւոր հետևանքներ։ Ամենայն տէրութեան գլխաւորագոյն պարտաւորութեանց մինն է անշուշտ հոգալ ժողովրդի կրթութեան և լուսաւորութեան վերայ։ Բայց չէ կարելի ասել որ այս գործը անպատճառ պիտի մնայ միշտ փակուած տէրութեան ձեռքին։ Երբ հասարակութիւնը արդէն բաւականին զարգացած է և ճանաչում ուսման գինը, շատ օգտակար է լինում գործի համար, իսկ տէրութեան համար մեծ թեթևութիւն թէ դրամաւոր կողմից և թէ զբաղմանց կողմից, թոյլ տալ որ նոյն հասարակութիւնը նոյնպէս հոգայ իւր մտաւոր զարգացման վերայ։ Այժմ բոլոր լուսաւորեալ տէրութիւնները և նոցա հետ նաև մեր տէրութիւնը աւելի և աւելի համակրումեն այդ գաղափարին։ Եւրոպայում կան ոչ միայն ժողովրդական և միջնակարգ դպրոցներ, այլ և բարձրագոյն ուսումնարաններ և համալսարաններ, որք պահպանվումեն մասնաւոր կերպով, իբրև սեփականութիւն մասնաւոր անձնի կամ ընկերութեան, իսկ տէրութիւնը ունի նոցա վերայ միայն կարևոր վերահսկողութիւն, չխառնվելով նոցա ներքին կառավարութեան մէջ։

Մեր տէրութիւնը նոյնպէս թոյլ է տալի պահել մասնաւոր ուսումնարաններ արական և իգական սեռի, մինչև անգամ գիմնազիաներ։ Լուս. Նախարարութեան վերահսկողութեան ներքոյ եղել են 1872 թ. — 1.145 մասնաւոր ուսումնարաններ 40.615 սովորողներով, որից 18.549 տղայք և 22.066

աղջկունք։ Այս մասնաւոր ուսումնարանների մէջ եղել են աւելի շատ սկզբնական դպրոցներ—864, որոնցից՝ յատկապէս տղայոց համար—253, աղջկերանց համար—132, իսկ մնացած 479 դպրոցը երկու սեռի համար միասին։ Յետոյ՝ միջնակարգ ուսումնարաններ եղել են—281, որոնցից՝ առաջին կարգի—համարեա գիմնազիական ուսման շրջանով—87, և երկրորդ կարգի՝ համարեա պրօգիմնազիական և գաւառական դպրոցի ուսման շրջանով—194։ Այս 281 միջնակարգ ուսումնարանների մէջ եղել են իգական ուսումնարաններ առաջին կարգի—59 և երկրորդ կարգի—129, իսկ արական ուսումնարաններ առաջին կարգի—28 և երկրորդ կարգի—65։

Բոլոր մասնաւոր ուսումնարանների մէջ այլադաւան եկեղեցեաց պատկանումն եղել 70, որոնցից՝ գիմնազիա—3, առաջին կարգի—6, երկրորդ կարգի—15 և երրորդ կարգի—46։

Նախարարի հաշուի մէջ չէ յիշած թէ՝ մասնաւոր ուսումնարանների վերայ որքան ծախք է եղել և կամ որքան ուսումն աւարտողներ։

Մասնաւոր ուսումնարանների օգտակարութեան մասին ահա՛ ինչ է ասում Նախարարը. ,,Օգնելով նշանաւոր կերպով (բաւականին) տէրութեան ուսումնարաններին ժողովրդական մտաւոր զարգացման գործի մէջ, մասնաւոր ուսումնարանները ունեին նաև այն մեծ նշանակութիւնը որ՝ նոցանից շատերը են փակուած կամ գիշերօթիկ ուսումնարան և դորանով թեթևացնումն օտարաքաղաքացի ծնողների համար նոցա որդւոց կրթութեան գործը,, (8)։

---

(8) Журн. М. Н. Просв. Յուլիս, եր. 38։

Վերջացնենք մեր խօսքը հետևեալ ընդհանուր թուերով։ Լուսաւորութեան Մինիստրութիւնը ունեցել է 1872 թ.

	Թիւ ուսումնարանների	Թիւ սովորողների	Թիւ աւարտողների
Համալսարաններ	8	6697	1198
Նոցա բժշկ. մասնում մանկաբարձուհիք	,,	520	280
Բարձրագոյն ուսումնարանք	8	879	չիք տեղ
Արական գիմնազիաներ	122	39270	946
,, Պրօգիմնազիաներ	33	4789	314
Ռէալական ուսումնարաններ	7	1752	86
Պանսիօններ (գիշերօթ. մասն)	42	3374	չիք տեղ
Այլադաւան եկեղեց. ուսումն.	3	1909	35
Միջնակարգ մասնագիտ. ուսում.	4	1164	44
Գաւառական դպրոցներ	423	29709	3206
Վարժապետանոցներ	52	2552	213
Ժողովրդական դպրոցներ արակ. և իգակ. սեռի	19658	761129	42376
Իգական գիմնազիաներ, պրօգիմնազ. և ուսում.	188	23854	1126
Մասնաւոր ուսումնարաններ	1145	40615	չիք տեղ
գումար.	21693	918213	49824

* * *

Ազգային ուսումնարաններ Տաճկաստանում:

Ինչպէս յայտնի է՝ Տաճկաստանում, ոչ միայն մայրաքաղաք Կ. Պօլսում, այլ և նահանգական և գաւառական քաղաքներում, և մինչև անգամ աւաններում և գիւղերում կան այժմ բաւականին բազմաթիւ ազգային ուսումնարաններ և դպրոցներ: Այս կողմից բաղդատելով Տաճկաստանը Ռուսաստանի հետ, ի հարկէ մեր ազգի վերաբերմամբ, մենք պիտի տեսնենք որ՝ Հայերը Տաճկաստանում շրջապատած են աւելի յաջողակ հանգամանքներով լաւ և բարեկարգ ուսումնարաններ և ընտիր ուսուցիչներ ունենալու համար, քան թէ Ռուսաստանում: Յաջողակ դրութիւնը ուսումնարանների վերաբերմամբ կարող է լինել երկու տեսակ — նիւթական և ուսումնական:

Տաճկաստանում Հայերի թիւը 5—6 անգամ աւելի շատ է Ռուսաստանի հայերի թուից, ուրեմն նոցա մէջ աւելի շատ պիտի լինին հարուստ և կամ միջակ կարողութիւն ունեցող մարդիկ, քան թէ մեր մէջ: Այս դասակարգից դուրս եկող ազգասէր, հայրենասէր և ուսումնասէր մարդոց թիւը աւելի շատ պիտի լինի, քան թէ նոյն տեսակ դասակարգից, որի անդամների թիւը համեմատաբար փոքր է: Տաճկաստանի ազգասէր, հայրենասէր և ուսումնասէր մարդիկներից գոյացած մասնաւոր դասակարգը աւելի կարող է նիւթաւոր նուիրաբերութիւններ տալ ազգաշէն գործերի համար առհասարակ և ազգային ուսումնարանների համար մասնաւորապէս, քան թէ կարող է անել Ռուսաստանի ազգասէրներից, հայրենասէրներից և ուսումնասէրներից գոյացած մասնաւոր դասակարգը, որի անդամների թիւը, ինչպէս վերը ասացինք, պիտի լինի աւելի նուազ:

Ուրեմն Տաճկաստանի ազգային ուսումնարանները աւելի պիտի ապահովացրած լինէին նիւթաւորապէս, քան թէ Ռուսաստանի ազգային ուսումնարանները։

Այժմ բաղդատենք ուսումնական դրութիւնը։

Տաճկաստանի Հայերը աւելի բազմաթիւ են, ուրեմն նոցա մէջ աւելի շատ պիտի լինէին ուսումնասէր և ուսումնական մարդիկ, քան թէ Ռուսաստանի սակաւաթիւ Հայերի մէջ։ Աւելի շատ ուսումնականներից կարող են դուրս գալ ազգային ուսումնարաններին ծառայելու համար աւելի շատ անձինք։ Շատ ծառայողների մէջ կարող են լինել աւելի շատ ընդունակ գործողներ։ Շատ ընդունակ գործողները կարող են պահել աւելի շատ բարեկարգ և յառաջադէմ ազգային ուսումնարաններ։ Այդպիսի ուսումնարանները կարող են աւելի շատ ազդել ժողովրդի մտաւոր զարգացման վերայ և աւելի շատ տալ պատրաստուած գործողներ։

Վերջապէս Կ. Պոլիսը, իբրև Եւրոպական մայրաքաղաք, թէ Հայերի ահագին բազմութեամբ և թէ ուսումնական միջոցների հարստութեամբ կարող է ունենալ իւր մէջ աւելի շատ ուսումնականներ, ուսուցիչներ, ուսումնարաններ, հարուստ բարերարներ, և այլն, քան թէ, կարող է այս ամենայն ունենալ Թիֆլիզը, որը նոյն դրութիւնը ունի Ռուսաստանի Հայերի համար, ինչ որ ունի Կ. Պոլիսը Տաճկաստանի Հայերի համար։

Այսպէս ուրեմն մեր համառօտ բաղդատութիւնը պարզ ցուցանում է, որ՝ Տաճկաստանի Հայերը բարեկարգ ազգային ուսումնարաններ ունենալու համար շրջապատուած են աւելի շատ յաջողակ հանգամանքներով, քան թէ Ռուսաստանի Հայերը։ Բայց եթէ բաղդատենք նոցա և մեր ուսումնարանները, կտեսնենք բոլորովին հակառակ երևոյթ։ Թէպէտ Տաճկաստանի ազգային թերթերի մէջ չկայ մինչև այժմ մի պարբերական հըրատարակութիւն, որը պարապել յատկապէս ազգային ուսումնարաններով և մանկավարժական խնդիրներով, և թէպէտ եղած թերթերը սակաւ են սիրում խօսել ազգային ուսումնարանների վերայ, բայց և այն մանրամասն և ցիր ու ցան տեղեկութիւնները, որք երբեմն երբեմն, կարծես պատահմամբ, լինում են նոցա մէջ, ցոյց են տալիս ազգային ուսումնարանների դրութիւնը աւելի [illegible] քան թէ [illegible] [illegible] մեզ։ Այս տեղ մնում է միայն մի բացառութիւն—ուրեմն մեր Տաճկաստանցի սիրելի եղբայրները չեն կամենում օգուտ քաղել իւրեանց բարեպատեհ դրութիւնից և նպաստող հանգամանքներից լաւ, բարեկարգ և յառաջադէմ ուսումնարաններ պահելու համար։ Աւելի ցաւալին այն է որ՝ մինչև այժմ չկայ Տաճկաստանում մի բարձրաստիճան հոգևոր ուսումնարան Լուսաւորչական ուղղութեամբ բազմաթիւ եկեղեցիների համար արժանաւոր հոգևորականներ պատրաստելու նպատակով, որոյ թէև անհամեմատ շատ լինելով Ռուսաստանի մեր հոգևորականների թուից՝ մի կողմից աւելի շատ ունին արժանաւոր անդամներ, բայց միւս կողմից և աւելի շատ ունին նոյնպէս և անպիտան ու խայտառակ անդամներ, քան թէ Ռուսաստանի մեր հոգևորական դասը։

ԴՊՐՈՑԸ, որի սուրբ ցանկութիւնն է ծառայել ազգային ուսումնարաններին առհասարակ, վաղուց հարկաւոր էր համարում տալ իւր ընթերցողներին մի ամփոփ նկարագրութիւն Տաճկաստանի ազգային ուսումնարանների մասին թէ նիւթական և թէ ուսումնական կողմից, բայց կարևոր նիւթեր չկարողանալով ձեռք բերել, այսուհետև կքաղէ Տաճկաստանի ազգային հրատարակութիւններից ուշադրութեան արժանի տեղեկութիւններ սոյն խնդրոյ մասին։ Այս անգամ մենք յառաջ ենք բերում նոյնութեամբ մի յօդուած ''Լոյս,, կիսամսնող հրատարակութիւնից, որը ի դէպ ասել՝ մի ուրախալի բացառութիւն է կազմում Կ. Պօլսոյ թերթերի մէջ իր ճոխ, հանրապետական, ազնուական ու եւրոպական ուղղութեամբ (1).

Գաւառական Դպրոցներ
և
Հրահանգ
Ուսումնական պատուարժան խորհրդոյ
ազգային վարչութեան

Ա.

Գաւառական Դպրոցները առ այժմ Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհրդոյ հրահանգին հետ գործ չունին— ի՞նչու — վասն զի անոր արժանի չեն — վասն զի խմբագրուած է թէ «Վարժարանաց շէնքը և այլ ամէն կարգաւորութիւնը պէտք է ողջապահիկ կանոններու համեմատ ըլլան...»

---

(1) «Լրոյ» կիսամսեայ հանդէսը նոր պատկերազարդ հրատարակութիւն է, և սկսուել է անցեալ 1874 թուականի Յունիսի ամսից: Խմբագիր—հրատարակիչն է Հմայեակ Ծայրագոյն վարդապետ Գիմաքսեան: Տարեկան գինն է ճանապարհական ծախքով 24 տետրակի համար եօթ մէճիտ (4 ռուբլի): Հասցէն. ի Կ. Պօլիս, յազգային վարժարան Լէնէի Գալաթուի: Արժանապատիւ Խմբագիրը, թէև մեզ բոլորովին անծանօթ, բարեհաճել է ընտրել մեզ իր խմբագրութեան համար գործակից, ուղարկելով հինգ օրինակ ցանկացողաց համար: Մենք սիրով ընդունեցինք այսպիսի քաղցր յանձնարարու-

Երկրորդ՝ ինչպէս Ուսումնական Խորհրդոյ, նոյնպէս բոլոր հմուտ անձանց և ազգաց գաղափարը այս մասին տարակոյս չէ, որովհետև քանի որ ուսման նպատակը գործնական կենաց գիտութիւնը և մարդկային արժանապատուութիւնը շօշափելն է, և զայն մեզ աւանդելու օգտակար գործն է, թէ բարոյապէս և թէ քաղաքականապէս կպահանջուի որ ուսման կեդրոնատեղւոյն շէնքը և թէ տեղւոյն դիրքը և իր նիւթական անհրաժեշտ կարգադրութիւնքը առողջարանական կանոններու համեմատ ըլլան, և առաւել ևս վայելուչ և ընտիր։ Բայց դաւառական դպրոցներուն մեծ մասը հաւանականաբար ընդհանուրին մօտ մասը պահանջուածին համաձայն յատակագիծ մը ունենալէ զուրկ ըլլալնին տարապայման կարծիք մը չէ, մանաւանդ յորոց ոմանք միջնադարեան արգելանոց մը — տանջարան մը ըլլալն ալ կարծեմ կարծիք չէ, ինչպէս տեսածներէս և լսածներէս քանիին, որոնք փոխանակ՝ ազգին մտաւոր և ուսեալ և հայրենասէր և անոր օգտին ի սրտէ ցանկացող անհատներ՝ և գործնական բարոյագիտութեան վարժ անդամներ հասցնելու, ուրիշ խօսքով՝ փոխանակ իմաստութեան լոյս և կենաց բարգաւած յոյս շնորհելու, զանոնք ուսման յարմարութենէ և կենաց բարիքներէ Փիզիքապէս զրկելու լաւ կյարմարին. այս ալ կարծիք մը չէ հապա վերոյիշեալներուն հետ ոմանց կամ շատերուն գիտցած բանը։

թիւնը և խնդրումնիս ընթերցասէր ազգայիններից առանց խրախուսանաց չթողնել այս արդարև ըստ ամենայնի ընտիր և օգտակար հրատարակութիւնը։ Ցանկացողք կարող են դիմել Դպրոցի խմբագրութեան կանխիկ հատուցանելով և Դ ոսկի գինը։

Ուսումնական խորհրդոյ 55-րդ յօդուածին իմաստը արդարև խիստ ընտիր ու վայելուչ է, բայց գալով գաւառներուն հարց ու փորձ չունինք, և միայն փնտռենք. փնտռելով միթէ կարող պիտի ըլլայ մէկը գտնել Ընթերցարանի և Նախակրթարանի դասատու և դաստիարակ Ուսումնական խորհրդոյ հրահանգին՝ կամ աւելի աղէկ ըսել, դաստիարակութեան բնութեան խնդրոյն համեմատ մանկավարժք, որոնք իրենց բարոյական մեծ պաշտօնին պատասխանատու ճանչցուին, և անոր հետ մէկ տեղ յանձնուին նոյն պաշտօնին յարմար՝ և արժանաւորութիւն ունենալնին քննուի և գործով ապացուցուած ըլլան։

Ուսումնական խորհրդոյ առ Հոգաբարձութիւնս և առ Խնամակալութիւնս ուղղած 55-րդին համանեւ 56-րդ յօդուածին մէջ յիշած օգտակար կէտերը խիստ արդարացի պահանջներ են, որովհետև հազարաւոր հերքումներով դարձեալ անհերքելի ճշմարտութիւն մը ըլլալը շատերուն հաստատուած և այնպէս համոզուած բանն է։ Արդարև կպահանջուի որ Մանկավարժ մը ամեն բանէ աւելի հմուտ մէկը ըլլայ իր պաշտօնին բնութեանը համաձայն, որովհետև Ծաղկոցը Նախակրթարանէն և սա՝ Ուսումնարանէն նախամեծար է, որովհետև Ծաղկոցի պաշտօնէութեան գործը, անոնցմէ պահանջուած դաստիարակութեան հրահանգն ու մեթոդմանը և կենաց առաջին խնդիր մ՚է, և որովհետև տղայ մը իր առաջին տարիներուն մէջ ամեն ուրիշ բանէ աւելի լաւ տրամադիր է բարոյապէս օգտելու, և Ֆիզիգապէս վնասուելու, քան թէ յաջորդ տարիներու մէջ։ Արդ ուրեմն Ընթերցարանի և Նախակրթարանի Պաշտօնէութիւնը աւելի պէտք ունի ըստ կարգի բարոյագիտութեան և Ֆիզիգի առողջապահութեան, և ազգայինք այս կարգի փորձառու անձանց հմտութեան, որպէս զի ոչ որ յանդգնի մեզանցել ուշակիրթող մանկտւոյն փափուկ և խիստ փափուկ՝ մարմնաւոր գործարաններուն, և անոնց բարոյական ամէն կերպ կրթութեանց ու շարժմանց հիմն ու յարմար եղող հասակին և ընդունարանին — ուղեղին, մէկ խօսք՝ նորատի ցեղին բարոյական և ֆիզիքական կրթութեանց զարգացումներուն մէջ զարտուղութիւն մը մուծցնելու շարժառիթ չըլլայ։

Այն պատճառաւ է որ մենք Հայքս շատ օրեր, որուն մէջ շատ ողբեր, կոծեր ու սուգեր տեսած ենք, այն պատճառաւ է որ մեզի հետ շատ ազգեր ու ցեղեր շատ արտեր ձգած են և. տակաւին պիտի ձգեն, վասն զի քանի որ փորձն ու արդիւնքը կընայ վկայել այնպիսի մանկավարժի մը, դաստիարակի մը խնամոց ներքև շաբաթը ուրբաթէն, ընդերեկը արևագալէն կանուխ կողջունէ զմեր մանկտւոյն ծաղկազարդ հասակը։

Բաղձալի է ինձ մանկավարժութեան մէջ պատիւ ստանալ, քան թէ իրաւագիտութեան կամ մեծամեծ գիտութեանց մէջ համբաւ։

Դաստիարակութեան պաշտօնէութիւնը մարդկային բնութեան նկատմամբ երկրորդ արարիչ մը է, և ասոր վկայութիւնը նոյն իսկ վկայութիւն է, զի Աստուած՝ եթէ մարդկային ստեղծագործութեան հեղինակն է, Դաստիարակութեան պաշտօնեայն՝ նոյն ճարտարապետական բանաւոր մեքենայն Արարչին նպատակին և մարդկութեան օգտին ծառայեցնելու յատուկ միջոց մը է։

Գաւառներուն մէջ տակաւին դաստիարակութեան ազնիւ և նպատակին տեղեակ չեղողներուն հետ դժբաղդաբար խել մը գիտնական կարծուածներն ալ վարժապետական պաշտօնէութիւն ըսելով միայն հայկաբանութիւն և այս կարգէն կամ ասոր նման ին—ն վերջաւորուած ու նմանց դասատուները կը ճանչնան, միւսներու յարգն ու կեանք և փորձառութիւնը կարծես թէ իրենց քով առ ոչինչ է և ոչինչ կհամարուի, ասոր համար է որ մանկավարժի մը ամսականը 80 էն 100 և առաւելն 150ի փոքրիկ գումարը յատկացած է։

Ընդհանուր Ժողովք կամ մասնաւորապէս Գաւառացիք ամէն բանէ աւելի Ծաղկոցի և Նախակրթարանի համար բանիբուն և փորձառու պաշտօնէից յարգ տալու են քան թէ ուսման Գաւառացիք ամէն բանէ աւելի Ընթերցարանի և Նախակրթարանի շինութեան յարմարութեանց աշխատելու են քան թէ առայժմ Ուսումնարանի, քան թէ բարձր գիտութեանց հանրացման։

Ազգը թող աշխատի վարժարաններու շէնքը յարմարցնել Կեդր. Վարչութեան Ուս. Խորհրդոյ բազմարդիւն հրահանգին, այսինքն՝ իր վայելուչ դրութեան. թող աշխատի Ծաղկոցը Նախակրթարանէն և սա Ուսումնարանէն որոշել, և թող աշխատի Ժողը, բայց այսօրուան փորձ Ժողը, զանուած դպրոցական բանիբուն պաշտօնեայք նիւթապէս և բարոյապէս քաջալերել, և անոնց հետ մէկտեղ այնպիսեաց թիւը բազմապատկել, որ այն ատեն կարենայ ունենալ գաւառներու մէջ բարձր ուսմանց ինքնին տարածելու աւելի յարմարաւոր և պատրաստ սերունդ մը. եթէ ոչ երազին մէջ թշնամիէն փախչելու անկարող ճիգն ունեցող անձին պէս ազգին ներկայ ճիգը կարծեմ ընդունայն կըլլայ։

Ը.

Կեդրոնական Վարչութեան Ուսումնական Խորհրդոյ դպրոցական հրահանգը գիտութեան առնելու իրաւունքը նոյն հրահանգէն և իմ ազգային անհատական կարծեացս ազատութենէն ունենալու համարձակութեամբ՝ ինչպէս ասկէ առաջ ակնարկեցի թէ գաւառական դպրոցները խել մը գիտութեանց նկատմամբ առ այժմ խմբագրուած հրահանգին պարունակութեանց տրամադիր չեն, նոյնպէս և արդ՝ ուսանելեաց կարգին գալով դաստիարակութիւնը թէ Ուսումնական Խորհրդոյ և թէ Ազգին բաղձանացը համաձայն գաւառացւոց օգտակար ընելու համար, իբրև ազգային անհատ մը և իբրև նուիրական պարտք մը համարելով, դիտողութիւնս երկու առաջարկութեանց մէջ կամփոփեմ։

Դաստիարակութեան գործը բարւոքելու և արդիւնաւորելու համար գաւառական դպրոցները ալ երկու գլխաւոր պէտքի կկարօտին, նախապէս նիւթական հարստութեան, և ապա ձեռնհաս պաշտօնէութեան. զի ուր կայ, հարստութիւն և կամք, հոն կայ ամեն բարիք ու փառք, ուր կայ ճրագ (բարւոք դաստիարակ) մարդկութեան, արդարև հոն կայ լոյս փրկութեան, բայց քանի որ գաւառական դպրոցները դրամական նեղ վիճակ մը կկրեն, ի հարկէ բանիբուն և գիտուն պաշտօնեայք ունենալէ ալ պիտի զրկուին. ըստ որում Հրահանգին մէջ նշանակուած բարձր ուսումները, գիտութիւնները գաւառացւոց մէջ վաղ ընդ հուպ և ընդ փոյթ տարածուիլը չըպիտի տեսնենք, և հետևաբար այսպիսի հրահանգի մը առ այժմ պէտք ալ չպիտի ունենանք։

Բայց գաւառացի ազգայինք բարւոք դաստիարակութեան օգտակար հրահանգէ մը ալ զրկելը իրաւունք չէ, վասն զի դաստիարակութեան լոյսը՝ գիտութեան արեւը կկազմէ, և գիտութեան լոյսը արհեստներ կծնցնէ, կեանքերնիս և ընկերական յարաբերութիւննիս կբարւոքէ. ուստի եթէ կփափագիմք գաւառական վարժարաններէն արդիւնքը սպասել առաւել քան զոր ինչ են, իմ դիտողութեամբս նախ զանոնք երկու կարգի բաժնելու է Ընթերցարան և Նախակրթարան, իսկ ուսունել դասերը աւելի չափաւորելով գաւառացւոց վիճակին յարմարցնելու է։

Ընտելարանի մէջ աւանդուելիք ընթերցանութիւն և գիր և տէրունական աղօթք և մինչև թուանշան գծել ու ճանչնալ։

Ընտելարանի աշակերտք մինչդեռ տարիքներուն նկատմամբ մանկատածութեան արուեստին և այսպիսի խնամածութեան մը աւելի պէտք ունին, պէտք է որ Ընտելարանի Պաշտօնէութիւնը — Մանկավարժք գոնէ գրական աշխարհիկ լեզուին բաւական մաքուր առոգանութեան հետ մէկ տեղ ինչպէս վարքի կողմանէ ալ վկայեալ, նոյնպէս և գոնէ կարելի եղածին չափ կրօնական և բարոյական զգացմանց վերայ կիրթ և մանկական հասակին բոլոր կրթութեան և զարգացման վերաբերեալ հմտութեանց մէջ փոքր ինչ տեղեկութիւն կամ փորձառութիւն ունեցող անձինք ըլլան. որպէս զի ուսանող մանկութեան իմացական, բարոյական և ֆիզիքական կազմը չայլայլուի։ Այսպիսի մանկավարժի համար ստակ խնայելու չէ։

Ուղղեցի նորեկ աշակերտաց գիր ճանչցնելու ձանձրոյթ և վաղեմի զանազան վնասապարտ սովորութիւնքը բոլորովին վերջացնելով, միշտ մարմնամարզութեան ծառայող, և ատոր հետ մէկ տեղ, և գլուխ ամենայնի, նորեկ աշակերտք դպրոցասէր ըլլալու և գիր ճանչցնելու դիւրին եղանակը կ'ըսեմ և միանգամայն կը պնդեմ՝ թէ պէտք է իւրաքանչիւր դպրոցի մէջ հնարել տապլեզի նարտի նման նարտեր, այնպիսի տղայոց թուոյն առաւելութեան և նուազութեան համեմատ, 3, 5, 7, 8, և այլն. հարիւրի չափ, անոնց ամէն մէկին չորս կողմը գծել ա, բ, գ, 36 գիրերը։

Այս ամէնէն վերջը հարկ է որ Ընտելարանի հաղորդ կամ մօտ դասարան մը գտնուի, որ օրն այս ինչ անգամ թէ՛ տղայք, թէ՛ գրաւոր նարտերը հոն առնելով զբօսնցնել տղայք գիր ճանչցնելուն վերայ, և նոյն մէթոտով հետզհետէ վանկ և բառեր կազմել տալ. զոր օրինակ Հայ, Ձի, ջինջ բառերուն գրերը քովէքով շարել և կարդացնել իրենց։

Իսկ ելլելով Նախակրթարանը, զայն Ուսումնական Խորհրդոյ հրահանգէն աւելի ընդարձակօրէն առնելով երկրորդական վարժարանի կամ ուսումնարանի տեղ գործածել. որուն համեմատ ուսման ընթացից շրջանակն ու սահմանեալ ժամանակն քիչ աւելի ընդարձակ բռնել, որպէս զի հետեւեալ ուսումները նոյն պայմանեալ ժամանակին մէջ աւանդուին չորս հինգ տարւոյ շրջանին մէջ։

Գ.

Գաւառաբնակ ազգայնոց ուսման ու գիտութեան մասին ունեցած փափագնին ու եռանդնին և սէրերնին ոչ սանձահարելու, ոչ մարելու և ոչ ալ արգիլելու նպատակ ունիմ. այլ զայն մեր վիճակին, այսինքն գաւառացւոց վիճակին համեմատ արդիւնաւորելու համար, և մանաւանդ քանի որ մէջերնիս Կեդր. Ուսումնական Խորհրդոյ հրահանգին մէջ նշանակուած բարձր ուսմանց և գիտութեանց ընդհանուրին հմուտ և վարժ անձինք չունինք, և Կ. Պօլսոյ նման չափաւոր ամսականով այցելու դասատու ալ չգտնուիր, ըստ ինքեան և ըստ մեր տեղական յարմարութեան պէտք է որ խոնարհինք, և մեր հետ բոլոր բաղձանքնիս չափաւորենք. չափաւորելով, կնկատեմ որ գաւառացւոց համար առ այժմ կարեւորագոյն ուսանելիքն ըլլալու են Հայերէն գրաբառ լեզուի ուսումը, ուսումն Կրօնի ըստ դաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ մերոյ, Ազգային և Սրբազան պատմութիւն, Թուագիտութիւն և պարզ Տօմարակալութիւն, Բարոյական, Ազգային և Ընտանեկան կրթութիւն, Աշխարհագրութիւն և Եկեղեցական երգեցողութիւն, Տաճկերէն, և եթէ ներելի է ասոնց կարգին մէջ կյաւելցնեմ նաև համառօտ Ֆիզիքարանութիւն մը ալ։

Այս վերջինը թէ արդարեւ որչափ որ աստիճանաւ բարձր գիտութեանց կարգը կդասուի, բայց ամէն կարգի անձանց և արհեստաւորաց հարկաւորագոյն գոլով հոս յիշեցինք, որն որ ոչ միայն մտքերը իր յարաբերութեանց մէջ աւելի լաւ կը կրթէ, բանականութիւնը տրամաբանօրէն կզօրացնէ, հապա բնական երեւութից պատճառները մեզ ծանօթացնելով՝ հասարակ գործերու մէջ մեզ մեծամեծ օգտակարութեանց կը տիրացնէ։

Կեդրոնական Ուսմ. խորհուրդը իր խմբագրած հրահանգը հետեւութեամբ մը կրնամ հետեւցնել թէ, փորձառութեամբ չէ չափած ու ձեւած, այլ առ հաշիւ, եթէ հմտութեամբ է՝ միայն Կ. Պոլսոյ նկատմամբ կրնայ գործադրուիլ, իսկ գաւառներու համար լաւ ես համարելու է իբր փորձառու մը ըլլալով հրահանգ խմբագրել քան թէ, ենթադրութեամբ, քանզի սոյն կենսական խնդրոյն վերայ գաւառային դասատուներէն և դաստիարակներէն չեմ գիտեր մինչեւ ցարդ գրող և խօսող կայ չկայ, մէկն որ ես եմ, բայց դարձեալ առթիւ մը ենթադրութեամբ է, որովհետեւ ամէն գաւառ և գիւղ ոչ ոք աչքէ անցուցած է։ Ուստի կփափագիմ, և պէտք է որ Կեդր. Ուս. խորհուրդը թէ որ արժան կդատէ մեր հետեւեալ երկրորդ դիտողութիւնը ուշադրութեան առնելով՝ գաւառային ազգայնոց դաստիարակութեան կարեւոր կէտերը որոշելու համար բոլոր գաւառներու Ուսումնական խորհրդներէն և առաջնորդներէն տեղեկութիւն պահանջէ վարժարաններուն մէջ շարունակուած դասերուն և դասատուներուն ինչ ինչ գիտնալնուն, թէ իւրաքանչիւր վարժարանաց ծախքերուն վրայ և նոցա աղբիւրը ժողովրդէն կամ ուրկէ՞ գոյանալուն վրայ. այն ատեն հաւանական է որ Կեդր. Ուսումնական խորհուրդը իր ստացած ծանօթութիւններովը ըստ իր դատողութեան և թերևս մինչև հաշուով գաւառական հրահանգ մը պատրաստէ, որ այն ամենուս և իր խորհածէն աւելի ընտիրն ըլլայ։

Քաղաքներու մէջ թաղական դպրոցները միացնելն ալ կարևոր խնդրոց կարգէ դնելը ազգային առաջին գործ մը է, որ մեծ պատճառ են խնայութեան, իրար մրցութեան և գլուխ ամենայնի յառաջդիմութեան, վասն զի դրամական կարողութիւն և արժանաւոր դասատու պակսելով կամաց ակամայ ապիկարներու ձեռք կատարուի, վասն զի հոն է որ դաստիարակութեան յարգն ու փառքը կմարի, դաստիարակութիւնը իր գեղեցիկ նպատակէն կշեղի. և վասն զի այնպիսեաց մատաղ մտքերու հետ ունեցած առնչութեան, և տգէտ կամ անփորձ բժշկաց հիւանդներու այցելութեան հետևանքը մէկ է. տարբերութիւնը միայն գործոյն մէջ կտեսնուի։

Կեդրոնական Ուսումնական Խորհրդոյ ուշադրութեան արժանի գործն ալ է դասագիրքներու անկանոնութիւնը. հարկ չէ ըսել, թէ ասոր հետևանքն ինչ է, ու ինչ կծնի. միայն բաւական է ըսել թէ, դասատուի մը փոխուելուն և կամ աշակերտի մը ուրիշ դպրոց յաճախելուն մէջ դասագիրքներուն ալ փոխուիլը պէտք է որ նկատողութեան առնուի, և հետևանքը ըստ այնմ կշռուի, վասն զի գրեթէ բոլոր դասատուաց դասագիրքը և հետևաբար մեթոտը իրարմէ տարբեր են։ Անշուշտ Ուսումնական Խորհուրդը այն կէտն ալ ուշադրութեան առած կըլլայ մինչև ցարդ, քանի որ իր աչքին առջև Կ. Պոլսոյ դպրոցներն ալ նոյն անկարգութեամբ հաւասար են գաւառներուն հետ, ուստի յուսով ենք դասագրքի յատուկ ցուցակ մը հրատարակած կըլլայ (2)։

---

(2) Լոյս ամսագիր. Կ. Պոլիս, 1874—1875, № 13. 15 և 16։

Լուսաւորութեան Նախարարի հրահանգ արքունի ուսումնարանների համար:

ԴՊՐՈՑԻ անցեալ՝ 7-րդ համարում մենք առաջարկեցինք մեր ընթերցողներին մի ընդարձակ քննութիւն Պ. Մանդինեանցի "Դպրոցական Սահմանադրութիւն,, վերնագրով աշխատասիրութեան վերայ: Նոյն քննութեան սկզբում մենք ասացինք որ՝ մանկավարժ հեղինակը իւր տետրակի մէջ աչքի առաջև է ունեցել առաւելապէս դպրոցական կարգապահութիւնը: Իսկ արդարև մի ուսումնարանի ուսումնական և բարոյական զարգացման և յառաջադիմութեան համար մեծ նշանակութիւն ունի արտաքին կարգապահութիւնը: Վերջին ժամանակներում մանկավարժական գիտութիւնը մի առանձին ուշադրութիւն դարձրեց այս խնդրոյ վերայ, և սա ենթարկուեցաւ երկու տեսակ քննութեան և մշակութեան—գիտնական և գործնական:

Մի կողմից հմուտ մանկավարժները սկսեցին գիտնական դատողութիւններով և խորհրդածութիւններով պարզաբանել դպրոցական կարգապահութեան այլ և այլ մասները՝ հանելով տեսակ տեսակ եզրակացութիւններ կամ կանոններ: Միւս կողմից՝ ուսումնարանական վարչութիւնները սկսեցին յօրինել այլ և այլ հրահանգներ կամ կանոններ իւրեանց ուսումնարաններում կանոնաւոր և օգտակար կարգապահութիւն ընդունելու և պահպանելու համար: Բայց որովհետև այս հրահանգները և կանոնները միմեանց մէջ ունենում էին բաւականին խոշոր տարբերութիւններ բաւ պահանջման տեղական բազմատեսակ հանգամանքների, ուստի ուսումնարանների բարձրագոյն վարչութիւնները, զոր օրինակ ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւնները կազմելով առանձին յանձնաժողովներ ուսուցիչներից, տեսուչներից և վերատեսուչներից, և գիտնական մանկավարժներից՝ սկսեցին յօրինել և հրատարակել ընդհանուր հրահանգներ կամ կանոններ բոլոր ուսումնարաններին կարելւոյն չափ միակերպ ընթացք տալու համար այսպիսի ծանրակշիռ գործի մէջ։

Այսպիսի մի ընդհանուր հրահանգ կամ կանոնադրութիւն հրատարակեց անցեալ 1874 թուին նաև Ռուսաստանի ժողովրդական Լուս. Նախարարը իւր իշխանութեան ներքոյ եղած գիմնազիաների և պրօգիմնազաների համար։ Դեռ ԴՊՐՈՑԻ նախընթաց 7-րդ տետրակի համար մենք պատրաստած ունէինք առաջիկայ յօդուածը, որը է թարգմանութիւն Նախարարի վերոյիշեալ հրահանգի, բայց նիւթերի շատութիւնը և մանաւանդ Պ. Մանդինեանցի Դպրոցական Սահմանադրութեան առթիւ գրած քննութիւնը ստիպեցին մեզ յետաձգել սորա տպագրութիւնը մինչև այս համարը։ Այս տեղ ունեցանք և այն օգուտը որ՝ այժմ մեր ընթերցողները դիւրութեամբ կարող են մի կողմից օգտակար խորհրդածութիւններ և միւս կողմից խորհրդաւոր բաղդատութիւններ անել Նախարարի հրահանգի և Պ. Մանդինեանցի "Սահմանադրութեան„ մէջ։

Լուսաւորութեան Նախարարի հրահանգը կամ կանոնադրութիւնը բաղկանումէ երկու գլխաւոր մասից—առաջին՝ յատկապէս կանոնադրութիւն 86 յօդուածով, որք պիտի ունենան օրինական զօրութիւն, և երկրորդ՝ 15 յօդուածով բացատրութիւններ և խորհրդածութիւններ կանոնադրութեան մի քանի նշանաւոր կէտերի մասին։ Մենք յարմար *դատեցինք նախ՝ խօսել և յառաջ բերել այս երկրորդ մասնից գլխաւոր կէտերը, և ապա՝ առաջին մասից կամ յատկապէս կանոնադրութիւնից նոյնպէս գլխաւոր յօդուածները, որովհետև այս մասում կան այնպիսի յօդուածներ, որք վերաբերվումեն Նախարարութեան ուսումնարանների կեանքին յատուկ մի քանի կողմերին և չեն կարող առանձին հետաքրքրական նշանակութիւն ունենալ մեր ընթերցողների համար։*

Պ. Նախարարը՝ ի նկատի ունենալով գործի ծանրակշիռ նշանակութիւնը պահանջել էր կանխապէս իւր բոլոր ուսումնական շրջանների հոգաբարձուներից այս գործին վերաբերեալ կարևոր տեղեկութիւնները, յետոյ կազմել էր առանձին յանձնաժողով Պետերբուրգի բոլոր գիմնազիաների և պրօգիմնազիաների տեսուչներից ընդ նախագահութեամբ Նախարարի խորհրդարանի անդամի։ Ահա այս յանձնաժողովը կազմել էր վերոյիշեալ հրահանգը, որը Նախարարութեան գիտնական յանձնաժողովի մէջ մասնակցութեամբ Պետերբուրգի բոլոր գիմնազիաների վերատեսուչների՝ քննելուց և սրբագրելուց յետոյ՝ հաստատել է Նախարարը անցեալ տարու Մայիսի 4-ին(1)։

Այս հրահանգի վերաբերմամբ ուշադրութեան արժանի է երկու կէտը, առաջին ուսումնարանների մանկավարժական խորհուրդները կամ ժողովները կարող են ծանրակշիռ հանգամանքների և դիպուածների պատճառով փոփոխութիւններ անել հաստատած կանոնադրութեան մէջ և այդ փոփո-

---

(1) *Մեր յօդուածը քաղումենք Լ. Նախարարի բուն իսկ հրահանգից, որը տպած էր անցեալ* 1874 *թուին Լ. Նախարարութեան պաշտօնական ամսագրի մէջ*—Журн. М. Н. Просв. *Յունիսի։*

խութիւնները հաղորդել Նախարարութեան ի տեղեկութիւն, և երկրորդ՝ հարկաւոր է աշակերտներին վերաբերեալ կանոնները տպել պարզ և հասկանալի ոճով, փոքրերի համար մինչև անգամ ինչ ինչ կանոններ բաց թողնելով և բաժանել աշակերտներին։

Հետևեալ համարում մենք յառաջ կբերենք Լուսաւորութեան Նախարարի հրահանգը, հաստատածը արքունի գիմնազիաների և պրոգիմնազիաների համար։

(Կշարունակուի)։

* * *